



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ
ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ




2017թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՑԹԻ ԵՎ ՄԱՈՐՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2016-2017 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՐՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԻԿԱ ԱՆԵԼԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունը (այսուհետև՝ վարչություն), ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենսդրության, ՀՀ կրթության և գիտության նախարարի հրամանների, ՀՀ Գեղարքունիքի մարզպետի որոշումների ու կարգադրությունների պահանջներով, ինչպես նաև մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության 2016 և 2017 թվականների աշխատանքային ծրագրին՝ համապատասխան 2016-2017 ուսումնական տարում կազմակերպելով մարզային ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների գործունեությունը՝ իր աշխատանքները նպատակաուղղել է ապահովելու մարզի տարածքում պետական կրթական քաղաքականության իրականացումը, կրթության որակի բարձրացումը, կրթությունն ստանալու հավասար մատչելիությունը և համակարգի արդյունավետ գործունեությունը: Վարչությունն իր աշխատանքային գործունեության ընթացքում համագործակցել է նաև մարզում գործող հանրապետական և համայնքային ենթակայության կրթական, մշակութային և մարզական կազմակերպությունների հետ՝ կամ առնչվել է ընդհանուր թվով՝ 363 կազմակերպությունների հետ:

Գեղարքունիքի մարզի կրթական, մշակութային և մարզական կազմակերպություններ



Ընդամենը՝
363

Կրթության բնագավառ

Հայաստանի
գարգացման հիմքում
◀◀ԽԵԼԱՑԻԻ>>
գաղափարի ներդրումն
անվիճելի է




ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ


ՄԱՆԿԱՊԱՐՏԵՉ

ՀՀ Գեղարքունիքի մարզի 92 համայնքներից 30-ում գործում է 46 մանկապարտեզ՝ 116 խմբով, ուր հաճախում է 3392 երեխա: Մանկապարտեզներից 18-ը քաղաքային է, 28-ը՝ գյուղական, 26-ը գործում է շուրջտարի, 20-ը՝ սեզոնային: Նախադպրոցական տարիքի երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական հաստատություններում կազմում է 23,6%: Մարզի 33 համայնքներում նախադպրոցական կրթություն չի իրականացվում՝ մանկապարտեզ չլինելու պատճառով, իսկ 6 համայնքում /Վարսեր, Արծվանիստ, Զուլաքար, Թթուջուր, Վաղաշեն, Ծաղկունք/, մանկապարտեզներ կան, բայց չեն գործում: Առաջիկայում կգործեն Չկալովկայի, Տրետուրի /2017թ. սեպտեմբեր/, Ն. Գետաշենի և Գեղամավանի մանկապարտեզները /2018թ. /:


Մանկապարտեզների թիվը



Մանկապարտեզներում աշխատող մանկավարժների թիվը



*Մանկապարտեզների երեխաների թիվը՝ ըստ
քաղաքային և գյուղական համայնքների*



ՆԱԽԱԿԹԱՐԱՆ

Նախադպրոցական կրթության ցանցի ընդլայնման նպատակով 2011-2017թթ. մարզի 45 համայնքներում բացվել է 52 նախակրթարան, որից

41-ը՝ Համաշխարհային բանկի

11-ը՝ <<Փրկենք երեխաներին>> կազմակերպության աջակցությամբ: Նախակրթարաններ (1589 երեխա) գործում են՝


37-ը՝ հանրակրթական դպրոցներում (1043 երեխա).

14 -ը՝ մանկապարտեզներում (531 երեխա).

1-ը՝ գյուղապետարանում (15 երեխա):

2017-2018 ուսումնական տարում նախատեսվում է բացել ևս 6 նախակրթարան, որից 3-ը՝ Համաշխարհային բանկի (Հայրավանքի և Ակունքի միջնակարգ ու Մարտունու N1 հիմնական դպրոցներում), 3-ը՝ <<Փրկենք երեխաներին>> կազմակերպության (Գեղարքունիքի, Վարսերի, Վաղաշենի միջնակարգ դպրոցներում) աջակցությամբ:

Նախադրարարանների թիվը՝ ըստ տարիների 2012-2017թթ.



Նախակրթարաններ հաճախող երեխաների թիվը՝ ըստ տարիների 2012-2017թթ.

Որից՝ գյուղապետարանում

0

15

Որից՝ դպրոցում

318

358

778

759

1031

1043

Որից՝ մանկապարտեզում

253

223

440

439

495

531

Ընդամենը՝ նախակրթարաններում

571

581

1218

1198

1526

1589

0% 10% 20% 30% 40% 50% 60% 70% 80% 90% 100%

■ 2012 ■ 2013 ■ 2014 ■ 2015 ■ 2016 ■ 2017

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

- ▶ Շենքային պայմանների բարելավում (վերանորոգում և 14 շենքի հիմնանորոգում՝ մոտ 1 մլրդ. դրամ)
- ▶ Մասնագիտական կրթությամբ կադրերի պահանջ և գործող մանկավարժական կադրերի վերապատրաստում
- ▶ Մանկապարտեզների շուրջտարյա գործունեության ապահովում

ԴՊՐՈՑՆԵՐ

ՀՀ Գեղարքունիքի մարզում գործում են 125 հանրակրթական և 1 հատուկ դպրոց, այդ թվում՝

մարզային ենթակայության 118 հանրակրթական դպրոցներ, որից

տարրական՝ 2

հիմնական՝ 26

միջնակարգ՝ 89

հատուկ՝ 1

ՀՀ ԿԳՆ ենթակայության՝ 8 դպրոցներ

Մարզում գործող դպրոցներից՝

27-ը քաղաքային են, (որից 5-ը՝ ԿԳՆ ենթակայության)


99-ը գյուղական, (որից 3-ը՝ ԿԳՆ ենթակայության)

բարձր լեռնային բնակավայրում են 111-ը (որից 7-ը՝ ԿԳՆ ենթակայության)

լեռնային՝ 11-ը (որից 1-ը՝ ԿԳՆ ենթակայության)


հարթավայրային՝ 4-ը:

Ներառական կրթություն են իրականացնում 6 դպրոցներ:



■ 2017-2018

*Մարզի 126 դպրոցները՝ ըստ քաղաքային և
գյուղական համայնքների*



Աշակերտական համակարգ

2016-2017 ուսումնական տարում աշակերտների թիվը մարզում փաստացի եղել է 28710, այդ թվում՝ մարզային ենթակայության դպրոցներում՝ 27074 (94,3%)

ԿԳՆ ենթակայության դպրոցներում՝ 1636 (5,7%)

1-ին դասարան է հաճախել 3026 աշակերտ, /նախորդ տարվա համեմատ՝ 32-ով ավելի/, այդ թվում՝ մարզային ենթակայության դպրոցներում՝ 2995,

ԿԳՆ ենթակայության դպրոցներում՝ 31,

12-րդ դասարանցիների թիվը եղել է 1966, այդ թվում՝

մարզային ենթակայության դպրոցներում՝ 1520,

ԿԳՆ ենթակայության դպրոցներում՝ 446:

Մարզի համայնքների ղեկավարների և իրավասու կազմակերպությունների հետ համագործակցված աշխատանքի արդյունքում ապահովվել է դպրոցահասակ երեխաների ընդգրկումը ուսումնական հաստատություններ և, ըստ դպրոցների տնօրենների ու համայնքների ղեկավարների կողմից ներկայացված տեղեկատվության, մարզում չեն եղել հանրակրթությունից դուրս մնացած երեխաներ:

Առանձնակի ուշադրություն է դարձվել սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին դպրոց ընդգրկելուն, որի արդյունքում շուրջ 200 երեխա ապահովվել է հագուստով և գրենական պիտույքներով:

2016-2017 ուստարում մարզի 634 շրջանավարտ դիմել է բուհ, որից 555-ը ընդունվել է /կամ՝ շրջանավարտների 28,2%-ը, դիմորդների 87,54%-ը/:

Աշակերտների միջին խտությունը մարզում կազմել է 18,4, աշակերտ- ուսուցիչ հարաբերակցությունը՝ 8,6:

2017-2018 ուսումնական տարում, ըստ նախնական կոմպլեկտավորման, մարզային ենթակայության դպրոցներում ձևավորվելու է 2148,5 դասարան՝ 27844 աշակերտով, իսկ հատուկ դպրոցում՝ 7 դասարան՝ 39 աշակերտով:

2016-2017 ուստարվա սկզբում մարզային ենթակայության դպրոցներում փաստացի կոմպլեկտավորվել է 1470 դասարան՝ 27034 աշակերտով, Գավառի N 1 հատուկ դպրոցում՝ 7 դասարան՝ 40 աշակերտով, Մեանի N3 հիմնական դպրոցում՝ ռուսերեն ուսուցմամբ 4 դասարան՝ 31 աշակերտով, ՀՀ ԿԳՆ ենթակայության 1 կրթահամալիրում, 6 ավագ դպրոցում և Ծաղկունքի բաց դպրոցում սովորել է 1636 աշակերտ:

Մարզային ենթակայության հանրակրթական դպրոցների կողմից ներկայացված 2016-2017 ուստարվա 1-ին կիսամյակի շարժի և առաջադիմության տեղեկագրերի համաձայն՝ կիսամյակի սկզբում դպրոցների 1470 դասարաններում սովորել է 27033 աշակերտ (փաստացի՝ 27034 աշակերտ, տարբերությունը առաջացել է:

Ակունքի միջնակարգ դպրոցում՝ 3-րդ դասարանցիների 45-ի փոխարեն ներկայացվել է 46-ը:

Կուտական գյուղի միջնակարգ դպրոցի 6-րդ դասարանի աշակերտների թիվը 2-ի փոխարեն ներկայացվել է 3-ը:

Սոթք գյուղի միջնակարգ դպրոցի 1-ին դասարանի աշակերտների թիվը 14-ի փոխարեն ներկայացվել է 13-ը):

27034 աշակերտներից 115-ը ներառական կրթությամբ աշակերտներ են, որոնցից՝ 20-ը սովորել են Գավառի N 1 հիմնական դպրոցում, 15-ը՝ Ջամբարակի N 1 հիմնական դպրոցում, 4-ը՝ Վարդենիսի N2 հիմնական դպրոցում, 47-ը՝ Մաքսունու N2 հիմնական դպրոցում, 5-ը՝ Մեանի N3 հիմնական դպրոցում և 24-ը՝ Կարմիրգյուղի N2 հիմնական դպրոցում:

Կիսամյակի ընթացքում մարզի դպրոցներ է ընդունվել 121 աշակերտ, այդ թվում՝ արտերկրից՝ 55 աշակերտ, հանրապետության այլ մարզերի դպրոցներից՝ 40 աշակերտ, այլ ուսումնական հաստատություններից՝ 5 աշակերտ, դպրոցից մաղված կամ սպասարկման տարածքից՝ 21-ը: Մարզի դպրոցներից մարզի այլ դպրոցներ է տեղափոխվել 59 աշակերտ:

Կիսամյակի ընթացքում մարզի դպրոցներից տեղափոխվել և դպրոցները թողել է 336 աշակերտ, այդ թվում՝ արտերկրի՝ 211-ը, հանրապետության այլ մարզերի դպրոցներ՝ 100-ը, այլ ուսումնական հաստատություններ՝ 4-ը, դպրոցը թողել է՝ 21-ը, որից 1-ը՝ անհարգելի պատճառով:

Կիսամյակի ամփոփումից պարզվել է, որ կիսամյակի վերջում աշակերտների թիվը 26822-ն է, /կամ աշակերտների թիվը պակասել է 211-ով/, որից գնահատվել է 23795-ը:

2998 առաջին դասարանցիներ, գործող կարգի համաձայն, չեն գնահատվել:

Չի գնահատվել նաև դպրոցների 2-12-րդ դասարանների 29 աշակերտ:

Գերազանցիկներ են՝ 3885-ը (16,3%), հարվածայիններ են՝ 7322-ը (30,7%), միջակ առաջադիմություն ունեն՝ 12280-ը (51,6%), իսկ 308-ը՝ (1,2%) ունեն անբավարար գնահատական, որից 25-ը՝ 3 և ավելի առարկաներից:

Մարզի դպրոցների 2016-2017 ուստարվա 1-ին կիսամյակի, ըստ տարածքների, աշակերտների շարժը և առաջադիմությունը հետևյալն է՝

Հ/Հ	Տարածքի անվանումը	ին թիվ աշխ	Դպրոց են ընդունվել կիսամյակի ընթացքում		Դպրոցը թողել են կիսամյակի ընթացքում		թիվ աշխ	են Գն	գն չեն	գել	հար	միջ	անբավարար գնահատակ ան ունեն /աշխ/		արժեքի միջինը %	9 r
			ըն	թվո այդ	ըն	թվու այդ							ընդ	արժեքի միջինը այդ թվում 3-ը միջինը արժեքի միջինը		
1	Գավառ	5904	35	24	70	52	5865	5196	669	1083	1641	2403	62	7	98.6	52.4
2	Մարտունի	10459	30	11	133	105	10353	9187	1168	1397	2638	5044	108	12	98.8	43.9
3	Սևան	4301	32	14	31	21	4313	3819	494	664	1435	1711	9	1	99	70
4	Վարդենիս	4674	22	5	90	31	4608	4122	486	590	1231	2215	86	3	97.9	44.2
5	Ճամբարակ	1695	2	1	12	2	1683	1471	212	151	377	907	36	2	97,6	36
	Ընդամենը՝ մարզում	27033	121	55	336	211	26822	23795	3027	3885	7322	12280	308	25	98.7	47

Մարզի դպրոցների աշակերտների միջին առաջադիմությունը կազմում է 98.7%, որակը՝ 47%:

Մարզի միջին առաջադիմությունից ցածր առաջադիմություն ունեն Ճամբարակի (97.6%) և Վարդենիսի (97.9%), Գավառի (98.6%) տարածաշրջանի դպրոցները, իսկ որակ՝ Ճամբարակի (36%), Վարդենիսի (44.2%) և Մարտունու (43.9%) տարածաշրջանների դպրոցները:

Մարզի միջին առաջադիմությունից ցածր են Գավառի N 5 հ/դ (95.6%), Մարուխանի N 2 մ/դ (95%), Ակունքի մ/դ (88.3%) Տրետուքի մ/դ (91.9%), Ծովասարի մ/դ (95%), Ն. Գետաշենի N2 մ/դ (94.94%), Շորժայի մ/դ (93.4%), Ճամբարակի N 2 հ/դ (95%), Դդմաշենի մ/դ (97%) դպրոցները:

Մարզի միջին որակից ցածր են Գավառի N8 մ/դ (32.3%), Մարուխանի N2 մ/դ/38%/, Մ. Մասրիկի մ/դ (35.8%), Սոթքի մ/դ (29.7%), Աստղաձորի մ/դ (30.4%), Վարդենիկի N 2 հ/դ (36.4%), Մարտունի գյուղի մ/դ (23.4%), Արտանիշի մ/դ (26%), Դդմաշենի մ/դ (35.6%), Նորաշենի հ/դ (42%), Գագարինի մ/դ (29.8%) դպրոցները:

Մարզի միջին առաջադիմությունից և միջին որակից բարձր են՝ Գավառի N 2 մ/դ (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 59%), Գավառի N3 հ/դ (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 65.58%), Նորասուսի N 2 մ/դ (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 54%),

Ծափաթաղի մ/դ (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 78,57%), Գեղաքարի հ/դ (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 100%), Ծովինարի տարրական (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 75,55%), Լեռնահովիտի հ/դ (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 56,25%), Կալավանի մ/դ (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 87%), Մևանի N 1 հ/դ (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 62%), Մևանի N 3 հ/դ (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 69%) և մի շարք այլ դպրոցներ:

Կիսամյակի սկզբում Գավառի N1 հատուկ դպրոցի 7 դասարաններում սովորել է 40 աշակերտ, կիսամյակի վերջում՝ 43-ը:

Դպրոցի աշակերտների առաջադիմությունը կազմում է 100%:

Կիսամյակի սկզբում մարզում գործող 6 ավագ դպրոցների, 1 կրթահամալիրի և <<Ծաղկունքի բաց դպրոց.>> հիմնադրամի տնօրենների կողմից ներկայացրած 2016-2017 ուստարվա I-ին կիսամյակի աշակերտների շարժի և առաջադիմության տեղեկագրերի համաձայն սովորել է 1636 աշակերտ, իսկ կիսամյակի վերջում՝ 1620 աշակերտ:

Այսպիսով՝ 2016-2017 ուսումնական տարվա I-ին կիսամյակի ավարտին մարզում գործող 125 հանրակրթական դպրոցներում սովորել է 28442 աշակերտ, այդ թվում՝

1. մարզային ենթակայության 117 դպրոցներում՝ 26822 աշակերտ
2. ՀՀ ԿԳՆ ենթակայության /1 կրթահամալիր, 1 հիմնադրամ՝ <<Ծաղկունքի բաց դպրոց >> և 6 ավագ/ դպրոցներում՝ 1620 աշակերտ:

2016-2017 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի վերջում մարզային ենթակայության հանրակրթական դպրոցների աշակերտների թիվը 26719-ն է, /կամ աշակերտների թիվը պակասել է 101- ով/, որից գնահատվել են 23712-ը:

2975 առաջին դասարանցիներ, գործող կարգի համաձայն, չեն գնահատվել, սակայն համապատասխան դպրոցների մանկավարժական խորհուրդների որոշմամբ և ծնողների համաձայնությամբ՝ 27 աշակերտներ մնացել են դասընթացը կրկնելու:

Չեն գնահատվել նաև դպրոցների 2-12-րդ դասարանների 31 աշակերտներ, որոնք նույնպես մնացել են դասընթացը կրկնելու (0,2%): Զուվաբերի միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ Շուշան Ղանդիլյանը արտերկրում ուսումնաստության և Մեծ Մասրիկի միջնակարգ դպրոցի 1 աշակերտ տարեկանի արդյունքում 3 և ավելի առարկաներից անբավարար գնահատական ունենալու պատճառով նույնպես մնացել են դասընթացը կրկնելու:

Այսպիսով, անկախ քննությունների արդյունքներից, 1-12-րդ դասարաններում դասընթացը կրկնելու են մնացել 60 աշակերտ (0.21%), իսկ 2-12-րդ դասարաններում ամառային առաջադրանք են ստացել 33-ը (0.14%):

Գերազանցիկներ են՝ 5676-ը (23.9%), հարվածայիններ են՝ 6509-ը (27.45%), միջակ առաջադիմություն ունեն՝ 11476-ը (48.39%), իսկ 50-ը՝ (0.21%) ունեն անբավարար գնահատական:

2016-2017 ուստարվա ավարտին 12-րդ դասարանում սովորել է 1499 աշակերտ, որից գնահատվել է 1488 աշակերտ, չի գնահատվել 11 աշակերտ՝ 200 ժամ և ավելի բացակայություն ունենալու պատճառով:

Պետական ավարտական քննությունների/ այդ թվում ս/թ հուլիսի 2-8-ը անցկացված վերաքննությունների/ արդյունքում 12-րդ դասարանն ավարտել և միջնակարգ կրթության ատեստատ է ստացել 1475 աշակերտ, որից 3-ը դրսեկ: 12-րդ դասարանի 3 աշակերտ պարզևատրվել է <<Գերազանցության մեդալով>> / 2 աշակերտ Մանե Հարոյանը և Միլենա Տոնեյանը, Զոլաբարի ՈՒ միջնակարգ դպրոցից և 1-ը Զոհրաբ Խաչատրյանը Ներքին Գետաշենի ՈՒ միջնակարգ դպրոցից/:

9-րդ դասարանում, 2016-2017 ուստարվա ավարտին, սովորել է 2197 աշակերտ, սակայն գնահատվել է 2195-ը, չի գնահատվել 2-ը՝ 200 ժամ և ավելի բացակայություն ունենալու պատճառով:

Ավարտական քննություններին/ այդ թվում՝ ս/թ հուլիսի 2-8-ը անցկացված վերաքննություններին / մասնակցել և դրական գնահատական է ստացել 2189 աշակերտ: 2 աշակերտ չի մասնակցել բոլոր քննություններին:

Ավարտական քննություններին չեն մասնակցել, սակայն հիմնական կրթության վկայական են ստացել Ճամբարակի N1 հիմնական դպրոցի ներառական կրթությամբ 1 աշակերտ, Գավառի N1 հիմնական դպրոցի ներառական կրթությամբ 1 աշակերտ, Վարդենիսի N2 հիմնական դպրոցի ներառական կրթությամբ 1 աշակերտ, ինչպես նաև Գավառի N1 հատուկ դպրոցի 6 աշակերտ:

Գերազանց առաջադիմությամբ ավարտած 9-րդ դասարանի 139 աշակերտի տրվել է գերազանցության նմուշի վկայական, իսկ 2056-ին՝ սովորական նմուշի վկայական:

4-րդ դասարանում ուսումնական տարվա ավարտին սովորել է 2536 աշակերտ, որոնցից փոխադրական քննություններին թույլատրվել են մասնակցելու 2534-ը, իսկ փոխադրական քննություններին մասնակցել է 2530-ը և ստացել դրական գնահատական:

Մարզի դպրոցների 2016-2017 ուստարվա 2-րդ կիսամյակի աշակերտների շարժը և առաջադիմությունն քստ տարածքների հետևյալն է

Հ/Հ	Տարածքի անվանումը	ըդ 2 թիվը աշկ սլ	Դպրոց են ընդունվել կիսամյակի ընթացքում		Դպրոցը թողել են կիսամյակի ընթացքում		ըդ 2 թիվը աշկ	են Գնա	գնա չեն	գեր	հալ	միջև	անբավար ար գնահատա կան ունեն /աշ./		%	%
			ըն	թվ այլ	ը	թվո այդ							ըն	և 3 թվ այդ		
1	Գավառ	5864	27	9	35	24	5855	5186	669	1455	1446	2282	3	0	99,9	55,9 3
2	Մարտունի	10352	54	20	89	59	10310	9145	1165	2080	2337	4717	11	0	99,9	48,3 9
3	Սևան	4313	30	20	46	27	4297	3811	486	1098	1227	1482	4	0	99,9	61,0
4	Վարդենիս	4608	23	8	49	22	4582	4103	479	833	1117	2128	24	1	99,4	47,51
5	Ճամբարա կ	1683	10	0	18	6	1675	1467	208	210	382	867	8	0	99,4	40,0
	ընդամենը մարզում	26820	119	57	22 0	135	26719	23712	3007	5676	6509	11476	50	1	99,78	51,38

Մարզի դպրոցների աշակերտների միջին առաջադիմությունը կազմում է 99.78 %, որակը 51.38%:

Մարզի միջին առաջադիմությունից ցածր առաջադիմություն ունեն Ճամբարակի (99.4%) և Վարդենիսի(99.4%) տարածաշրջանների դպրոցները, իսկ որակ Ճամբարակի (40%), Վարդենիսի (47.51%) և Մարտունու (48.39%) տարածաշրջանների դպրոցները:

Մարզի միջին առաջադիմությունից ցածր են Գավառի N 7 միջնակարգ (99.4%), Կախակն գյուղի միջնակարգ (94.12%), Մեծ Մասրիկ գյուղի տարրական (95%), Ծովասարի միջնակարգ (98%), Զոլաքար գյուղի N 1 միջնակարգ (98%), Ճամբարակ քաղաքի N 4 միջնակարգ (93%), Շորժայի միջնակարգ (97.3%), Դոմաշենի միջնակարգ (99.5%) և մի շարք այլ դպրոցներ:

Մարզի միջին որակից ցածր են Գավառի N8 միջնակարգ (37.28) Գեղարքունիք գյուղի միջնակարգ (44.2%), Շատվան գյուղի միջնակարգ (23.7%), Սոթք գյուղի միջնակարգ (30.7%), Աստղաձորի միջնակարգ (37%), Վերին Գետաշենի թիվ 2 միջնակարգ (37.07%), Աղբերք գյուղի միջնակարգ (23%), Արտանիշի միջնակարգ (29%), Գագարինի միջնակարգ (34.5%), Դոմաշենի միջնակարգ (41%) և մի շարք այլ դպրոցներ:

Մարզի միջին առաջադիմությունից և միջին որակից բարձր են Ծաղկաշենի միջնակարգ (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 80%), Գավառի N2 միջնակարգ (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 69.5%), Գեղաքարի հիմնական (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 100%), Ծափաթաղի միջնակարգ (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 66.66%), Ծովինարի տարրական (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 81.8%), Լիճքի հիմնական (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 75.6%), Կալավանի միջնակարգ (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 87%), Գետիկի միջնակարգ (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 57%), Սևանի N 3 հիմնական (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 76%), Սևանի N 1 հիմնական (առաջադիմությունը՝ 100%, որակը՝ 71%) և մի շարք այլ դպրոցներ:

Կիսամյակում Գավառի N 1 հատուկ դպրոցի 7 դասարաններում սովորել է 43 աշակերտ:

Դպրոցի աշակերտների առաջադիմությունը կազմում է 100%:

2-րդ կիսամյակի ավարտին ներառական կրթությամբ սովորողների թիվը եղել է 126, այդ թվում՝ 23-ը սովորել է Գավառի N 1 հիմնական դպրոցում, 15-ը՝ Ճամբարակի N 1 հիմնական դպրոցում, 4-ը՝ Վարդենիսի N 2 հիմնական դպրոցում, 26-ը՝ Կարմիրգյուղի N 2 միջնակարգ դպրոցում, 54-ը՝ Մարտունու N 2 հիմնական դպրոցում, 4-ը՝ Սևանի N 3 հիմնական դպրոցում:


Հանրակրթական դպրոցների տնօրենների կողմից ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմ ներկայացված և <<Մայրբի>> համակարգով մեր տնօրինությանն ուղարկված գրությունների հիման վրա մեր կողմից կազմվեց տեղեկանք <<ՀՀ Գեղարքունիքի մարզային ենթակայության հանրակրթական դպրոցներում 2016-2017 ուսումնական տարվա ընթացքում 120-200 ժամ բացակայած սովորողների քննությունների անցկացման ժամանակացույցի վերաբերյալ>>, ըստ որի, 120-200 ժամ բացակայություն ունի ընդամենը 28 աշակերտ՝ 8 դպրոցից:

Այսպիսով՝ 2016-2017 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակի ավարտին մարզում գործել են 125 հանրակրթական դպրոցներ/ առանց Գավառի թիվ 1 հատուկ դպրոցի տվյալների / 28327 աշակերտով, այդ թվում՝

1. Մարզային ենթակայության 117 դպրոցներում՝ 26719 աշակերտ.
2. ՀՀ ԿԳՆ ենթակայության /1 կրթահամալիր, 1 հիմնադրամ՝ <<Ծաղկունքի բաց դպրոց>> և 6 ավագ / դպրոցներում՝ 1608 աշակերտ:

Ուսումնական տարվա ընթացքում մարզի դպրոցներ է ընդունվել 240 աշակերտ (որից 112-ը՝ այլ հանրապետություններից), իսկ տեղափոխվել կամ դպրոցը թողել է 556 աշակերտ, (որից 349-ը՝ այլ հանրապետություններ) կամ աշակերտների թիվը պակասել է 312- ով:

*Մարզային ենթակայության դպրոցներում սովորող
աշակերտների ուսման որակը և առաջադիմությունը*



Աշխատողներ

2016-2017 ուստարում մարգային ենթակայության 117 հանրակրթական դպրոցներում և մեկ հատուկ դպրոցում աշխատել է 4496 մարդ՝ այդ թվում վարչական դրույքների թիվը կազմել է 241, աշխատողների թիվը՝ 251: Մանկավարժական դրույքների թիվը՝ 2435.7, աշխատողների թիվը՝ 3089 (իսկ մարզում՝ 3343 ուսուցիչ): Ուսումնաօժանդակ դրույքների թիվը՝ 1172.3, աշխատողների թիվը՝ 1156 (2014 թվականի համեմատությամբ վարչական և ուսումնաօժանդակ աշխատողների թիվը կրճատվել է համապատասխանաբար՝ 112-ով և 301-ով):

Բարձրագույն մանկավարժական կրթությամբ աշխատել է 1679 մանկավարժ, բարձրագույն կրթությամբ՝ 933 մանկավարժ, միջնակարգ մասնագիտական կրթությամբ՝ 461 մանկավարժ, միջնակարգ կրթությամբ՝ 16 մանկավարժ:

Միջին մանկավարժական դրույքը կազմել է 102,6 հազար դրամ, միջին մանկավարժական աշխատավարձը՝ 123,1 հազար դրամ: Մարզում ուսուցչի միջին ծանրաբեռնվածությունը կազմում է 14,4 դասաժամ:

Անհրաժեշտ կազմակերպչական և նախապատրաստական աշխատանքներ են կատարվել ատեստավորման ենթակա ուսուցիչների վերապատրաստումներին աջակցելու հարցում:

Կազմվել և ՀՀ ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտին է տրամադրվել վերապատրաստվող ուսուցիչների անվանացանկը, վերապատրաստումների ժամանակացույցի մասին իրազեկվել է բոլոր հանրակրթական դպրոցներին: 2016 թվականին ատեստավորվել է 580 ուսուցիչ, տարակարգ է ստացել 35-ը:

2017 թվականին ատեստավորման նպատակով ներկայացվել է 617 ուսուցչի տվյալ: Որոշակի աշխատանք է տարվել դպրոցները մանկավարժական կադրերով համալրելու ուղղությամբ: Ուսումնական տարվա ընթացքում առաջացած մանկավարժական թափուր տեղերը համալրվել են մրցույթային կարգով և 51 դպրոցում անցկացված մրցույթների (այդ թվում՝ կրկնակի և բազմակի մրցույթներ) արդյունքում նշանակվել է 66 ուսուցիչ: <<Ղասավանդի ք, Հայաստան>> կրթական հիմնադրամի հետ համագործակցելով նոր ուսումնական տարում մարզ կգործուղվի ևս 2 ուսուցիչ, որոնք կղասավանդեն Վարդենիկի N1 հիմնական /աշխարհագրություն/ և Մարտունու միջնակարգ /ինֆորմատիկա/ դպրոցներում:

Ներկայումս մարզի դպրոցներում աշխատում է 23 գործուղված ուսուցիչ և չնայած դրան դեռևս մարզի 26 դպրոցում առկա է 47 ուսուցչի թափուր տեղ:

Դպրոցաշինություն և գույքի ձեռքբերում

2015



Պետական բյուջե	63 մլն. դր. / 2 դպրոց
Տնտեսված միջոցներ	125, 46մլն. դր. / 21 դպրոց
Հումանիտար ծրագիր	60 մլն.դր / 62 դպրոց

2016



Պետական բյուջե	156 մլն.դր / 2 դպրոց
Տնտեսված միջոցներ	310,9 մլն.դր / 14 դպրոց/
Հումանիտար ծրագիր	52 մլն.դր/ / 57 դպրոց

2017



Պետական բյուջե	167,3 մլն.դր/ 4 դպրոց
Մնացորդ ` 01.01.2017թ.	974460,3 մլն.դր
Հումանիտար ծրագիր	28 մլն.դր / 48 դպրոց

Հանրակրթական հաստատություններում սովորողների ուսուցման գործընթացի անխափան կազմակերպման համար նոր ուստարվա նախաշեմին հատուկ ուշադրություն է դարձվել դպրոցական շենքերի պահպանմանը և տարածքների բարեկարգմանը: ՀՀ պետական բյուջեի միջոցներով 2016 թվականին վերանորոգվել են Սևանի N1 հիմնական (56 մլն դրամ) և Լճափի միջնակարգ (10 մլն դրամ) դպրոցները:

2017 թվականին ՀՀ պետական բյուջեի միջոցներով սկսվել են վերանորոգման աշխատանքները Ձուլաքարի N2 միջնակարգ (50 մլն դրամ), Սևանի N1 հիմնական (78 մլն դրամ), Սևանի N6 միջնակարգ (20.9 մլն դրամ) և Վարսերի միջնակարգ (18.4 մլն դրամ) դպրոցներում:

Հանրակրթական հաստատությունների գործունեության արդյունավետության բարձրացման գործում, կարևորելով ոչ պետական միջոցների ներգրավումը, ապահովվել է մարզպետարանի աշխատակազմի մյուս կառուցվածքային ստորաբաժանումների, համայնքների ղեկավարների, դպրոցների և նախադպրոցական հաստատությունների տնօրենների համագործակցությունը միջազգային կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների, ֆիզիկական և իրավաբանական անձանց, բարեգործական կազմակերպությունների հետ, որի արդյունքում իրականացվել է շուրջ 50 միլիոն դրամի արտաբյուջետային միջոցների ներգրավում հանրակրթական և նախադպրոցական ուսումնական հաստատությունների վերանորոգման ու գույքավորման աշխատանքներում, այդ թվում՝

Լճաշենի մ/դ՝ «Փարոս» հիմնադրամ/ 1-ին մասնաշենքի 2-րդ հարկի վերանորոգում, Օովագյուղի մ/դ՝ Օովագյուղի համայնքապետարան՝ 0.705 մլն.դրամ/ գույքի ձեռքբերում և <<Վորլդ Վիժն>>՝ 0.22 մլն. դրամ/սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին /,Վարսերի մ/դ՝ Վարսերի համայնքապետարան՝ 0.433 մլն.դրամ/ գույքի ձեռքբերում/, Չկալովկայի մ/դ՝ Վահրամ և Երվանդ Կարապետյաններ՝ 0.43 մլն.դրամ /գույքի ձեռքբերում/, Գավառի N1 հատուկ դպրոց՝ «ՀՕՖ»/ դռների ու պատուհանների վերանորոգում և <<Վորլդ Վիժն>>՝ /երեխաներին խաղալիքների և սալակների տրամադրում/, Կարմիրգյուղի N2մ/դ՝ <<Վորլդ Վիժն>>՝ ինժեներական լաբորատորիաների գույքի համալրում, Գավառի N7 մ/դ՝ <<Վորլդ Վիժն>>՝ 2.572 մլն. դրամ՝ ինժեներական լաբորատորիա, Օակքարի մ/դ՝ Էդիկ, Գվիդոն, Պետիկ և Ժիրայր Ավետիսյան եղբայրներ՝ 5.14 մլն. դրամ /գույքի ձեռքբերում/, «Ներքին Գեառաշենի N2 մ/դ՝ Հովհաննիսյան Հակոբ՝ 3 մլն. դրամ/մարզադահլիճի վերանորոգում/, <<Վորլդ Վիժն>>՝ և «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» կազմակերպության աջակցությամբ Կարճաղբյուրի մ/դ, Օովակի մ/դ, Վարդենիսի N2հ/դ, Վարդենիսի N4 հ/դ ստեղծվել ու կահավորվել են ինժեներական իմբակ-լաբորատորիաներ, ինչպես նաև մի շարք կազմակերպությունների և անհատ բարեգործների կողմից որոշ դպրոցներում գույքի ձեռքբերման և վերանորոգման աշխատանքների աջակցում:

Մարզի 14 հանրակրթական դպրոցներում իրենց կողմից խնայված ֆինանսական միջոցների հաշվին 2016 թվականի նախահաշվի շրջանակներում իրականացվել են ավելի քան 310 մլն դրամի շինվերանորոգման աշխատանքներ:

h/h	Դպրոցի անվանումը	Պայմանագրի արժեքը / հազ. դրամ/
	Մարտունու տարածաշրջան	
1	Ձորագյուղի հիմնական դպրոց	10388.4
2	Գեղհովիտ գյուղի թիվ 1 միջնակարգ դպրոց	11960.0
3	Աստղածոր գյուղի միջնակարգ դպրոց	15997.5
4	Արծվանիստի միջնակարգ դպրոց	19008.0
5	Ծակքար գյուղի միջնակարգ դպրոց	18506.4
6	Լիճքի միջնակարգ դպրոց	17600.0
	Գավառի տարածաշրջան	
1	Կարմիրգյուղ գյուղի թիվ 2 միջնակարգ դպրոց	11150.0
	Վարդենիսի տարածաշրջան	
1	Վարդենիսի թիվ 2 հիմնական դպրոց	18730.0
2	Վարդենիսի թիվ 3 հիմնական դպրոց	11550.0
3	Ծովակ գյուղի միջնակարգ դպրոց	11880.0
	Սևանի տարածաշրջան	
1	Սևանի թիվ 3 հիմնական դպրոց	19360.0
2	Գազարիսի միջնակարգ դպրոց	7882.1
3	Լճաշեն գյուղի միջնակարգ դպրոց	6500.3
4	Վարսերի միջնակարգ դպրոց	4939.5
	Ընդամենը	310916.147

Ֆինանսավորում

Մարզային ենթակայության 117 հանրակրթական դպրոցների 2017 թվականի հաստատված բյուջեն կազմում է 6299100.4 հազ. դրամ:

Հատուկ կրթության 2017 թվականի բյուջեն կազմում է 92374.3 հազ. դրամ:

Ներառական կրթության 2017թվականի բյուջեն կազմում է 74232.5 հազ. դրամ:

Նախադպրոցական կրթությամբ՝ 128007.9 հազ. դրամ:

Արտադպրոցական ուսուցմամբ՝ 14634.4 հազ. դրամ:

Ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելյալճարի փոխհատուցման համար պլանավորվել է 4172.5 հազ. դրամ

Մարզային ենթակայության բոլոր 118 դպրոցներում ստեղծվել են կայքէջ, որտեղ յուրաքանչյուր եռամսյակի ավարտին տեղադրվում են նաև ֆինանսական գործունեության վերաբերյալ տեղեկատվություն՝ ապահովելով դպրոցի ֆինանսական գործունեության

Զեռուցում

Համապատասխան աշխատանք է տարվել ջեռուցման ապահովման ուղղությամբ, որի արդյունքում հաստատությունները նախընտրած վառելիքով կազմակերպել են շենքերի ջեռուցումը.

- 63 դպրոց օգտագործել է գազ (անհատական կաթսայատան միջոցով).
- 6-ը՝ էլեկտրաէներգիա.
- 48-ը՝ հեղուկ վառելանյութ:

Կատարված աշխատանքներ և հաջողություններ

Օրենսդրության պահանջների կատարում և պահպանում

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի՝ 2010 թվականի մարտի 18-ի N 113-ն հրամանով հաստատված <<Հայաստանի Հանրապետության <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգի>> պահանջներին համապատասխան՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետի որոշումներով, առաջադրող մարմինների առաջարկությունների համաձայն՝ 41 դպրոցում կատարվել է խորհուրդների 58 անդամների փոփոխություն:

Մարզի դպրոցներ կատարած ստուգայցերի ժամանակ առանձնակի ուշադրություն է դարձվել հաստատությունների տնօրենների կողմից իրավական ակտերի պահանջների կատարմանը և ՀՀ օրենսդրությանը՝ դրանց համապատասխանությանը:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի համապատասխան որոշումներով 22.09.2016թ. N409-Ա՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 10-ի <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության /նշանակման/ կարգը հաստատելու մասին>> N 319-Ն որոշման հավելվածի 4-րդ և 5-րդ կետերի և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի <<Հայաստանի Հանրապետության <<Պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման կարգ>>-ը հաստատելու և <<Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2006 թվականի դեկտեմբերի 8-ի N 981-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին>> N 113-Ն հրամանի 17-րդ կետի պահանջների խախտման պատճառով անվավեր է ճանաչվել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Օովագյուղ գյուղի Մուրացանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի 2016 թվականի օգոստոսի 12-ի որոշումը տնօրենի պաշտոնի թափուր տեղի համար անցկացված մրցույթի արդյունքների վերաբերյալ և 22.09.2016թ. N 411-Ա՝

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2013 թվականի ապրիլի 15-ի N396-Ն հրամանով հաստատված <<Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար անցկացվող մրցույթի օրինակելի կարգի>> 7-րդ և 16-րդ կետերի պահանջների խախտման պատճառով անվավեր է ճանաչվել <<Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Օռվաասարի Բախտիբեկ Մուրադյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատարի 2016 թվականի սեպտեմբերի 8-ի N 22-Ա հրամանը, իսկ կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջները խախտելու համար կարգապահական տույժ են ստացել Սևանի N5 միջնակարգ դպրոցի տնօրեն Նարինե Սահակյանը, Զուլաքար գյուղի Ա. Վարդանյանի անվան N2 միջնակարգ դպրոցի տնօրեն Սամվել Մելիքյանը, Վարդենիկի Ա. Օհանյանի անվան N2 հիմնական դպրոցի տնօրեն Սևադա Գափոյանը, Սարուխան գյուղի Հ. Խաչատրյանի անվան N3 միջնակարգ դպրոցի տնօրեն Անահիտ Բալասանյանը և Լիճքի հիմնական դպրոցի տնօրեն Գագիկ Մկրտչյանը:

Ռազմաեայրենասիրական և դաստիարակչական աշխատանքներ

Մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում սովորողների ուսման և դաստիարակության աշխատանքների կազմակերպման համատեքստում հետևողականորեն իրականացվել են անչափահասների շրջանում հանցագործությունների կանխարգելմանը նպատակաուղղված բազմաթիվ և տարաբնույթ միջոցառումներ՝ ապահովելով համագործակցություն մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների, համայնքների, ղեկավարների, ուսումնական հաստատությունների տնօրենների ու մանկավարժների, ծնողների, իրավապահ մարմինների, երիտասարդական միջոցառումների կազմակերպման մարզային կենտրոնի աշխատանքներում:

Մարզում 14 անչափահասների կողմից կատարված իրավախախտումների վերացման նպատակով հանրակրթական հաստատություններում, ըստ միջոցառումների ծրագրի, դասղեկի ժամերի, դասարանական և ծնողական ժողովների, աշակերտական ինքնակառավարման մարմինների միջոցառումների, թեմատիկ ցերեկույթների, հանդիսությունների միջոցով քննարկվել են հասարակության համար վտանգավոր, մարդու իրավունքներն ու արժանապատվությունը ոտնահարող երևույթների անընդունելիությունը և այն դրականը, որն ապահովում է հասարակության առաջընթացը:

Որոշակի աշխատանքներ են իրականացվել մարզի ուսումնական հաստատություններում սովորողների ամառային հանգստի կազմակերպման ուղղությամբ: Մարզի ավելի քան 980 աշակերտ ընդգրկվել է հանրապետության ամառային /այդ թվում՝ ԵԿՄ/ ճամբարներում, որից 307-ը՝ սոցիալապես անապահովներ:

Ապահովվել է ՀՀ հանրակրթական ավագ դպրոցների աշակերտների մասնակցությունը ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված ռազմամասնագիտական կողմնորոշման վերաբերյալ հանդիպմանը:

Կազմակերպվել են <<Դիպուկ հրաձիգ>> մրցույթի ներդպրոցական, տարածքային և <<Կորյուն>> ռազմամարզական խաղերի ներդպրոցական, տարածքային և մարզային փուլերը: <<Դիպուկ հրաձիգ>> ռազմամարզական խաղերի մարզային փուլում հաղթող ճանաչված Զոլաքար գյուղի N1 միջնակարգ դպրոցի թիմը հանրապետական փուլում գրավել է 1-ին տեղը:

Նախագորակոչային և գորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերում մարզային փուլի հաղթող Ճամբարակի ավագ դպրոցի հավաքական թիմը գրավել է 2-րդ տեղը:

Իրականացվել է ՆԶՊ կաբինետների, զենքի և զինամթերքի նպատակային օգտագործման և պահպանության մշտադիտարկում: Ներկայումս 107 դպրոց ունի ուսումնական զենք, իսկ մոտակա տարիներին, սահմանված պահանջներին համապատասխան, ուսումնական զենք և զինամթերք ստանալու հնարավորություն չունի մարզի 8 դպրոց (Զադացաձորի, Կուտականի, Ծափաթաղի միջնակարգ, Սեմյոնովկայի, Լեռնահովիտի, Գեղաքարի, Գեղամարակի, Ավագանի հիմնական դպրոցները):

Օլիմպիադաներ

ՀՀ Գեղարքունիքի մարզի դպրոցականների 2016-2017 ուստարվա առարկայական օլիմպիադաների դպրոցական, տարածքային և մարզային փուլերը կազմակերպվել և անցկացվել են ըստ նախատեսված ժամանակացույցերի: Մարզի 125 հանրակրթական դպրոցներից 123 դպրոցների 7864 աշակերտ 2016 թվականի դեկտեմբեր, 2017 թվականի փետրվար ամիսներին մասնակցել է ներդպրոցական փուլին, որից յոթ առարկաների գծով՝ առցանց/օնլայն եղանակով/, այդ թվում՝ Գավառի տարածաշրջանից՝ 1301 աշակերտ, Մարտունու տարածաշրջանից՝ 902 աշակերտ, Սևանի տարածաշրջանից՝ 460 աշակերտ, Վարդենիսի տարածաշրջանից՝ 874 աշակերտ և Ճամբարակի տարածաշրջանից՝ 380 աշակերտ:

Ներդպրոցական փուլում մասնակից չեն ունեցել Ծովինարի և Մ. Մասրիկի տարրական դպրոցները:

Ներդպրոցական փուլի արդյունքներով 9 առարկաներից տարածքային փուլին մասնակցության են երաշխավորվել 2680 աշակերտներ, այդ թվում՝ Գավառի տարածքից՝ 623 , Մարտունու տարածքից՝ 803, Սևանի տարածքից՝ 561, Վարդենիսի տարածքից՝ 412, Ճամբարակի տարածքից՝ 281 մասնակիցներ: <<Հայաստանի Հանրապետության դպրոցականների առարկայական օլիմպիադաների կազմակերպման և անցկացման կարգի>> համաձայն՝

<<Մաթեմատիկա>>, <<Աստղագիտություն>>, <<Ինֆորմատիկա>>, <<Քիմիա>>, <<Կենսաբանություն>>, <<Ֆիզիկա>>, <<Աշխարհագրություն>> առարկաներից օլիմպիադաները առցանց եղանակով կազմակերպել են մարզի 114 դպրոցներ, որոնցից առաջին փուլի մասնակցության հայտ են ներկայացրել 5615 աշակերտներ, մասնավորապես՝ մաթեմատիկայից՝ 2157, քիմիայից՝ 496, աստղագիտությունից՝ 0, կենսաբանությունից՝ 635, ինֆորմատիկայից՝ 207, ֆիզիկայից՝ 530, աշխարհագրությունից՝ 590: Մարզային փուլին մասնակցելու երաշխավորվել են 152 աշակերտ:

Տարածքային փուլն անցկացվել է ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2017թ. հունվարի 31-ի N 12-Ա որոշման համաձայն՝ ս/թ փետրվարի 1-ից 12-ը ընկած ժամանակահատվածում նախկին վարչական կենտրոններում: Այս փուլին երաշխավորված 2914 աշակերտներից փաստացի մասնակցել են 2583 -ը (կամ երաշխավորվածների 88.64%-ը) այդ թվում՝ Գավառի տարածքից՝ 704-ը, Մարտունու տարածքից՝ 751-ը, Սևանի տարածքից՝ 242-ը, Վարդենիսի տարածքից՝ 485-ը, Ճամբարակի տարածքից՝ 401-ը:

Տարածքային փուլին ակտիվ մասնակցել են, Վարդենիսի, Սևանի, Ճամբարակի ավագ, Գանձակի N 1, Նորատուսի N 1, Ն. Գետաշենի N 1, Գեղիովիտի N 2, Ակունքի, Լճաշենի, Վահանի միջնակարգ, Մարտունու N 1 և Սևանի N 3 հիմնական դպրոցները:

Տարածքային փուլին մասնակցած 2583 աշակերտներից մարզային փուլին երաշխավորվել են՝ 636-ը, այդ թվում՝ Գավառի տարածքից՝ 220-ը, Մարտունու տարածքից՝ 128-ը, Սևանի տարածքից՝ 117-ը, Վարդենիսի տարածքից՝ 84-ը և Ճամբարակի տարածքից՝ 87-ը:

Մարզային փուլը կազմակերպվել և անցկացվել է ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2017 թվականի փետրվարի 9-ի N23-Ա որոշման պահանջների կատարմամբ:

Մարզային փուլին 16 առարկաներից մասնակցեցին 496-ը, այդ թվում՝ Գավառի տարածքից՝ 170-ը, Մարտունու տարածքից՝ 103-ը, Սևանի տարածքից՝ 84-ը, Վարդենիսի տարածքից՝ 73-ը և Ճամբարակի տարածքից՝ 6-ը:

Մարզային փուլին ակտիվ մասնակցություն են ունեցել Վարդենիսի, Սևանի, Ճամբարակի ավագ, Գեղիովիտի N2, Ն.Գետաշենի N1, Ակունքի միջնակարգ և Սևանի N 3 հիմնական դպրոցները:

Մարզային փուլի 496 մասնակիցներից հանրապետական փուլին երաշխավորվեցին 74 աշակերտ: Ըստ տարածքների հանրապետական փուլին երաշխավորվածների քանակն հետևյալն է.

Տարածքի անվանում	8-րդ դաս.	9-րդ դաս.	10-րդ դաս.	11-րդ դաս.	12-րդ դաս.	ընդամենը
Գավառ	1	2	6	5	5	19
Սևան	0	8	3	3	5	19
Ճամբարակ	2	2	0	3	7	14
Մարտունի	2	2	4	2	2	12
Վարդենիս	0	2	3	0	5	10
Ընդամենը	5	16	16	13	24	74

Ամփոփելով 2016-2017 ուսումնական տարվա ՀՀ դպրոցականների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլին մասնակցած մարզի աշակերտների արդյունքները պարզվեց հետևյալը՝

հանրապետական փուլին երաշխավորված 74 աշակերտներից մասնակցել են՝ 72-ը, չեն մասնակցել՝ 2-ը:

Մասնակցած աշակերտներից 14-ը ստացել են դիպլոմներ, 10-ը՝ գովասանագրեր, իսկ <<ԼՁՊ>> առարկայից՝ մարզի թիմը հանրապետությունում գրավել է վեցերորդ տեղը:

1-ին կարգի դիպլոմ են շահել՝

Ներքին Գետաշենի N1 միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտ Պետրոս Սիրականյանը և Սևանի ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտուհի Սյուզաննա Սանամյանը՝ <<Գերմաներեն>> առարկայից,

Նորատուսի N1 միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի Նունե Պողոսյանը՝ <<ՀԵՊ>> առարկայից:

2-րդ կարգի դիպյում են շահել՝

Զովաբերի միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի Տաթևիկ Հակոբյանը՝ <<Պատմություն>> և <<ՀԵՊ>> առարկաներից.

Ճամբարակի ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ Արսեն Հարությունյանը <<Գերմաներեն>> առարկայից.

Սարուխանի N3 միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ Գոռ Դոնոյանը << Հայ գրականություն>> առարկայից:

3-րդ կարգի դիպյում են շահել՝

Մարտունու N2 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ Միս Նիկոյանը՝ <<Աշխարհագրություն>> առարկայից.

Սևանի ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ Արման Երվանդյանը՝ <<Կենսաբանություն>> առարկայից.

Գեղհովիտի N1 միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտուհի Մարո իսախանյանը <<Պատմություն>> առարկայից.

Ճամբարակի N1 հիմնական դպրոցի 8-րդ դասարանի աշակերտ Էրիկ Մուսայելյանը՝ <<Մաթեմատիկա>> առարկայից.

Ակունքի միջնակարգ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ Արփինե Հակոբյանը << Հայ գրականություն>> առարկայից.

Գանձակի N1 միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանի աշակերտուհի Զուլիա Հարությունյանը և Սևանի N 4 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտուհի Էլեն Նավասարդյանը՝ <<ՀԵՊ>> առարկայից:

Գովասանագրեր են ստացել՝

Վարդենիսի ավագ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի Անի Համբարձումյանը՝ <<Կենսաբանություն>> առարկայից:

Ճամբարակի ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ Սիրակ Կիրակոսյանը<<Անգլերեն>> առարկայից:

Գավառի N2 միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի Նարինե Մանուկյանը <<Պատմություն>> առարկայից:

Վարդենիկի կրթահամալիրի 10-րդ դասարանի աշակերտուհի Աիդա Բադալյանը՝ <<Աշխարհագրություն>> առարկայից:

Սարուխանի N1 միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհի Մանե Դեղոյանը՝ <<Հայոց լեզու>> առարկայից:

Նորատուռի N1 միջնակարգ դպրոցի 10-րդ դասարանի աշակերտուհի Ալլա Ասոյանը՝ <<Հայ գրականություն>> և <<ՀԵՊ>> առարկաներից:

11-րդ դասարանի աշակերտ Արսեն Աթեյանը՝ <<Հայ գրականություն>> առարկայից:

Սևանի N 3 հիմնական դպրոցի 9-րդ դասարանի աշակերտուհի Զուլիետա Առաքելյանը և

Տրետուքի միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի աշակերտ՝ Նարեկ Գալստյանը <<Հայ գրականություն>> առարկայից:

Դասագրքերի և ուսումնամեթոդական ձեռնարկների հասկացում

Աշխատանք է տարվել մարզի դպրոցները 2016-2017 ուսումնական տարվա համար նախատեսված դասագրքերով, ուսումնամեթոդական ձեռնարկներով ապահովելու ուղղությամբ: ՀՀ ԿԳՆ և համապատասխան հրատարակչությունների միջև կնքված պայմանագրերի համաձայն՝ մարզկենտրոն են ներկրվել և ըստ ներկայացրած հայտերի, դպրոցներին են բաշխվել 2016-2017 ուստարվա 1-12-րդ դասարանների 72 անուն 115614 կտոր դասագիրք, ուսուցչի ձեռնարկ և ուսումնաօժանդակ գրականություն (տեղեկագրեր, պաստառներ, քարտեզներ, մանկավարժական պարբերականներ): Գանձումների և մուծումների աշխատանքները կատարվել են 100%:

2017-2018 ուստարվա համար մարզկենտրոն են ներկրվել և, ըստ ներկայացրած հայտերի, դպրոցներին են բաշխվել 1-12-րդ դասարանների 62 անուն 88845 կտոր դասագիրք և ուսուցչի ձեռնարկ:

<<Տարվա լավագույն ուսուցիչ>>
<<Տարվա լավագույն տնօրեն>>
<<Տարվա լավագույն դաստիարակ>>

2016թ-ին Դրախտիկ գյուղի միջնակարգ դպրոցի <<Պատմություն>> առարկայի ուսուցիչ Արարատ Մովսեսյանը հանրապետությունում արժանացել է <<Տարվա լավագույն ուսուցիչ>> կոչմանը, Սևանի N 2 <<Զարթոնք>> մսուր-մանկապարտեզի դաստիարակ Նարինե Հարությունյանը արժանացել է <<Տարվա լավագույն դաստիարակ>> կոչմանը՝ պարգևատրվելով ավտոմեքենաներով:

2016-2017 ուսումնական տարվա լավագույն ուսուցիչ է ճանաչվել Նորասուս գյուղի N1 միջնակարգ դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցիչ Աշխեն Գեղամյանը, լավագույն տնօրեն Չորագյուղի Հայրիկ Ղազարյանի անվան հիմնական դպրոցի տնօրեն Սարգիս Սարգսյանը, լավագույն դաստիարակ Գավառի N3 մանկապարտեզի դաստիարակչուհի Արմինե Հովհաննիսյանը:

Ինժեներական լաբորատորիաներ

Մարզի 14 դպրոցներում, մեկ քոլեջում և Գավառի մանկատանը գործող ինժեներական լաբորատորիաների 26 խմբերում հաճախում է 591 երեխա: 2017թ. սեպտեմբերից մարզի ևս 7 դպրոցներում կգործեն ինժեներական լաբորատորիաներ՝ 180 երեխայի համար:

Տեսողատեր

Մարզային ենթակայության 109 դպրոցներում բնագիտական առարկաներից անցկացվել են 1691 տեսադասեր, 9 դպրոցներում չեն անցկացվել /Նորատուսի N 3, Ծաղկաշենի, Արտանիշի, Ծովասարի, Աստղածորի միջնակարգ, Գավառի N1 հատուկ, Ծովինարի, Մեծ Մասրիկի տարրական և Գեղաքարի հիմնական դպրոցներում/:

Տեղեկատվական կայքէջ

Կիրառելով տեղեկատվական տեխնոլոգիաներն ու նորարարական մեթոդները՝ կրթության որակի բարձրացման, ծնող-դպրոց համագործակցության և կապի ամրապնդման նպատակով մարզի դպրոցներում ներդրված <<**Dasaran.am**>> կրթական ծրագրի աջակցությամբ հետևել ենք երեխայի դպրոց հաճախելիության և առաջադիմության վերաբերյալ տեղեկատվությանը:

<<**Dasaran.am**>> կրթական ծրագրի տնօրենի կողմից պարբերաբար մեզ է տրամադրվում տեղեկատվություն դասամատյանների էլեկտրոնային մուտքագրման աշխատանքների վերաբերյալ: Վերջին՝ 30.05.2017 թվականին տրամադրված տեղեկատվության համաձայն, մուտքագրումները լիարժեք կատարած/100%/ դպրոցների ցանկում է 75 դպրոց, ոչ լիարժեք կատարողների/51-99%/ ցանկում՝ 39 դպրոց/, թերի աշխատանքներ կատարողի/0-50%/՝ 3 դպրոց (Վաղաշենի, Ծովակի և Ակունքի միջնակարգ դպրոցներ):

ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳ ՈՒ ՂԱՐ

Մարզի 5 դպրոցներում (Գավառի N4 հ/դ, Սևանի N3 հ/դ, Մարտունու N2 հ/դ, Վարդենիսի N4 հ/դ և Ճամբարակի N1 հ/դ) 2015-2016 ուսումնական տարվանից ներդրվել է «Ազգային երգ ու պար» առարկան:

Կազմակերպվել են ՀՀ ԱԺ գավաթի խաղարկության, շարադրությունների մրցույթներ, նկարչական ցուցահանդեսներ, երաժշտական փառատոներ, ազգային տոներին, հոբելյանական տարելիցներին նվիրված հանդիսություններ, Ֆրանկոֆոնիայի օրերի շրջանակներում կազմակերպվող միջոցառումներ, նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության ռազմամարզական խաղեր, որոնք նպատակաուղղվել են սովորողների մեջ հայրենասիրության արմատավորմանն ու խորացմանը, ուսման որակի և արդյունավետության բարձրացմանը:

Կազմակերպվել և անցկացվել են տարաբնույթ միջոցառումներ՝ նվիրված պետական և ազգային տոներին, ինչպես նաև հիշատակի՝ Հայոց Մեծ եղեռնի և 1988թ. երկրաշարժի զոհերի հիշատակի օրերին:

Կազմակերպվել և անցկացվել են Մայրենի լեզվի օրվան, Հայոց բանակի ստեղծման տարելիցին, Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի 72-ամյակին, ՀՀ Սահմանադրության օրվան, ՀՀ անկախության 26-րդ տարեդարձին նվիրված տարաբնույթ միջոցառումներ:

2016 թվականին <<Սասնա ծռեր>> էպոսասացության փառատոնի մարզային փուլին մասնակցել և հաղթող են ճանաչվել Նաջարյան Վահեն, Արևշատյան Գուրգենը, Սիմոնյան Նարեկը՝ Կարմիրգյուղի N 2 մ/դ, Հովհաննիսյան Փայլակը, Մարդոյան Լուսինեն՝ Կարմիրգյուղի N 1 մ/դ, Դավթյան Սևակը՝ Լանջաղբյուրի մ/դ, Ավետիսյան Սամվելը՝ Մարտունու N 1 հ/դ և Մնեյան Մանանան՝ Հայրավանքի մ/դ: Հանրապետական փուլում 1-ին տեղ է գրավել Կարմիրգյուղի N 2 մ/դ աշակերտ Սիմոնյան Նարեկը, Կարմիրգյուղի N 1 միջնակարգ դպրոցի աշակերտ Մարդոյան Լուսինեն՝ 2-րդ տեղ, իսկ Մարտունու N 1 հ/դ աշակերտ Ավետիսյան Սամվելը՝ ակտիվ մասնակցության համար արժանացել է խրախուսական մրցանակի:

2016 թվականին <<Սասնա ծռեր>> էպոսասացության փառատոնի մարզային փուլին մասնակցել և հաղթող են ճանաչվել Լանջաղբյուրի, Հայրավանքի, Կարմիրգյուղի N 1, N 2 միջնակարգ և Մարտունու N 1 հիմնական դպրոցները: Վերոնշյալ փառատոնի հանրապետական փուլը 2016 թվականին անցկացվեց մեր մարզում, որին մեր մարզի աշակերտների հետ միասին մասնակցում էր ԼՂՀ-ի և Շիրակի, Կոտայքի, Արագածոտնի, Արարատի մարզերի մրցույթ-փառատոնի մարզային փուլի հաղթող 25 աշակերտ: Մեր մարզից հանրապետական փուլում հաթող ճանաչվեցին և առաջին ու երրորդ տեղերը զբաղեցրին Կարմիրգյուղի N 1, N 2 միջնակարգ, Մարտունու N 1 հիմնական դպրոցի աշակերտներ Նարեկ Սիմոնյանը, Լուսինե Մարդոյանը և Սամվել Ավետիսյանը:

2016 թվականին <<Բարբառների երկխոսություն>> փառատոնի մարզային փուլին մասնակցել և հաղթող են ճանաչվել Սևանի N 1 հիմնական, Կարմիրգյուղի N2 և N1 միջնակարգ դպրոցները: Հանրապետական փառատոնին մասնակցել և 1-ին տեղ է զբաղեցրել Կարմիրգյուղի N 2 միջնակարգ դպրոցի աշակերտ Վանիկ Վարդանյանը, 2-րդ մրցանակ՝ Սևանի N 1 հիմնական դպրոցի աշակերտ Գարիկ Ղազարյանը, իսկ Կարմիրգյուղի N 1 հիմնական դպրոցի աշակերտներ Մարիամ Վարդանյանը և Օլեգ Թովմասյանը արժանացել են 3-րդ մրցանակի:

2017 թ. Ասմունքի փառատոնի մարզային փուլում հաղթող են ճանաչվել՝ Լիանա Օհանյանը /1-ին մրցանակ, Գավառի N 5 հ/դ/, Նարե Խանդանյանը /2-րդ մրցանակ, Լճաշենի մ/դ/, Լիդա Գալոյանը /3-րդ մրցանակ, Շովազարդի մ/դ/, Էլմիրա Պապյանը /1-ին մրցանակ, Փամբակ-Դարանակի մ/դ/, Շուշան Ղալակչյանը /2-րդ մրցանակ, Կարմիրգյուղի N 1 մ/դ/, Անի Դաշյանը /3-րդ մրցանակ, Փամբակ-Դարանակի մ/դ/:

Հանրապետական փուլում՝ Էլմիրա Պապյանը / Փամբակ-Դարանակի մ/դ/, Նարե Խանդանյանը /Լճաշենի մ/դ/, Անի Դաշյանը /Փամբակ-Դարանակի մ/դ/ արժանացան խրախուսական մրցանակների:

<<Ժիվայա կյասիկա>>, Գավառի երկրագիտական թանգարանում անցկացված <<Զատիկ>>, <<Եվրոպական ժառանգության օրեր>>, <<Թանգարանային զիշեր>> միջոցառումներին ակտիվ մասնակցություն են ցուցաբերել Կարմիրզյուղի N1 և N2, Հայրավանքի միջնակարգ, Գավառի ավագ, N1, N4 հիմնական դպրոցների աշակերտները, մանկատան սաները:

Գավառի քաղաքային գրադարանում անցկացված միջոցառումներին ակտիվ մասնակցություն են ցուցաբերել Գավառի N 7 միջնակարգ, Գավառի ավագ, N 1,2,3, և 4 հիմնական դպրոցի աշակերտները:

Հուլիս ամսին Վրաստանի Հանրապետությունում անցկացվեց պարի միջազգային մեծ փառատոն, որին մասնակցեցին նաև մեր մարզի պարային խմբերը: Գանձակի N1 միջնակարգ դպրոցի աշակերտներից կազմված խումբը /Գանձակի երաժշտական դպրոց/ 32 պարային խմբերի մեջ հաղթող ճանաչվեց և արժանացավ 1-ին մրցանակի:

<<Ընթերցման օլիմպիադային>> ակտիվ մասնակցություն են ցուցաբերել Երանոսի N2, Կարմիրզյուղի N 1, Կարմիրզյուղի N 2 , Գանձակի N 1, Գանձակի N2, Նորատուսի N 1, Սարուխանի N 1, Զուլաքարի N 1, Ն.Գետաշենի N 2, Լճաշենի, Օովազարդի, Փամբակ-Դարանակի միջնակարգ և Գավառի N 3, Գավառի N 4, Գավառի N 5, Սևանի N 2, Սևանի N 3, Վարդենիսի N 2 և Մարտունու N 1 հիմնական դպրոցները:

Մարզի դպրոցները ակտիվորեն մասնակցել են նաև <<Հայաստան համահայկական հիմնադրամի>> կողմից կազմակերպվող հեռուստամարաթոնին և համապատասխան հաշվեհամարին մուծել ավելի քան 3894.0 հազար դրամ:

Մարտ



Կազմակերպվել են բռնցքամարտի, ձեռքի գնդակի, վոլեյբոլի, Ֆուտբոլի և այլ մարզաձևերից մարզային առաջնություններ, իսկ հաղթողներից շատերը հաջողությամբ են հանդես եկել նաև մրցումների հանրապետական փուլերում: ՀՀ անկախության 26-րդ տարեդարձին նվիրված ՀՀ դպրոցականների 26-րդ մարզական խաղերի եզրափակիչ փուլում Գավառի N 2 և Գեղարքունիքի միջնակարգ դպրոցների վոլեյբոլի հավաքական թիմը գրավեց 3-րդ տեղը, իսկ Գավառի N 5 հիմնական դպրոցի ձեռքի գնդակի թիմը հանրապետական փուլում գրավեց 2-րդ տեղը:

ՀՀ ԱԺ գավաթի խաղարկության եզրափակիչ փուլում մարզի հավաքական թիմը, որում ընդգրկված էին Մարտունու N1 և Մարտունու N2 հիմնական և Գավառի N2 միջնակարգ դպրոցի 4-6-րդ դասարանների աշակերտները, արժանացան 3-րդ մրցանակի և գավաթի:

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից ՀՀ դպրոցների 1-3-րդ և 4-7-րդ դասարանների աշակերտների շրջանում անցկացված սպորտլանդիայի ՀՀ Գեղարքունիքի մարզային փուլը, որին մասնակցեցին համապատասխանաբար 69 և 81 դպրոցների թիմեր, իսկ հաղթող Գավառի N2 միջնակարգ և Սևանի N1 հիմնական դպրոցների հավաքական թիմերը, հաջող հանդես եկան հանրապետական փուլում:

Ծրագրեր

2010 թվականից ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի կողմից Ռուսաստանի Դաշնության Ֆինանսավորմամբ և ՀՀ կառավարության մասնակցությամբ ՀՀ Գեղարքունիքի մարզի 113 դպրոցում իրականացվում է <<Դպրոցական սնունդ>> ծրագիրը, որտեղ ընդգրկված է մարզային ենթակայության 111 և ՀՀ ԿԳ նախարարության ենթակայության 2 դպրոց (Ծաղկունքի բաց դպրոց և Վարդենիկի կրթահամալիր):

Ծրագրում ընդգրկված է շուրջ 12050 երեխա, այդ թվում՝ 1589-ը նախակրթարանների սան:

Չեն ընդգրկվել ավագ դպրոցները և Գավառի N7 մ/դ, Սարուխանի N2 մ/դ, Սևանի N2, Գեղամաբակի, Գեղաքարի և Ավազանի հիմնական դպրոցները:

Կատարվել են վարչության աշխատանքային ծրագրով նախատեսված բոլոր միջոցառումները, ներկայացվել է մարզպետի՝ 112 որոշումների և 269 կարգադրությունների նախագիծ, պատասխանվել է քաղաքացիների դիմում-բողոքների և տարբեր կազմակերպություններից ստացված 672 գրությունների:

Վարչությունն իր աշխատանքները կազմակերպել է՝ համագործակցելով մարզպետարանի ու ՀՀ ԿԳՆ կառուցվածքային տարբեր ստորաբաժանումների, համայնքների ղեկավարների, հումանիտար և հասարակական կազմակերպությունների աշխատակիցների հետ:

Հիմնախնդիրներ

- Լաբորատոր սարքավորումներով ու նյութերով ապահովումը (ապահովված են միայն 11 դպրոցներ).
- Ջեռուցման լոկալ համակարգով ապահովումը (ապահովված է միայն 63 դպրոց).
- Համակարգչային ժամանակակից տեխնիկայով և սարքավորումներով, աշակերտական սեղան-նստարաններով և ուսուցչական աթոռներով, սպորտային գույքով համալրումը.
- Հեռավոր և սահմանամերձ բնակավայրերում ուսուցչի թափուր տեղերը զբաղեցնելու համար մասնագետների պահանջի բավարարումը (26 դպրոցում՝ 47 ուսուցչի թափուր տեղ).
- Վթարային վիճակում գտնվող 3 (Գեղիհովիտի N2, Վ.Գետաշենի N2 միջնակարգ և Լիճքի հիմնական) դպրոցական շենքերի հիմնանորոգումը և առհասարակ դպրոցական շենքերի վերանորոգումը.
- Նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների վերապատրաստման անհրաժեշտությունը.
- Խորհուրդների անդամների համար վերապատրաստման դասընթացների անհրաժեշտությունը:

ՄԱՐԶՈՒՄ ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՅՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՁԵՌՆԱՐԿՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Առաջիկա տարիներին կատարվելիք աշխատանքների պլանավորման հիմքում դրվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2017-2022 թվականների ծրագիրը /հաստատված ՀՀ կառավարության 2017թվականի հունիսի 19-ի N 646-Ա որոշմամբ/ և Հայաստանում ներքին խնդիրների լուծման ու հասարակական բարեկեցության բարձրացման հնարավորությունների վրա կենտրոնանալու, ՀՀ կառավարության ծրագրին մեր մասով աջակցելու և իրագործելու նպատակով նախատեսում ենք կազմակերպել հետևյալ աշխատանքները.

1. Կրթության մատչելիության ապահովման նպատակով իրագործելու ենք՝

1) Նախադպրոցական կրթության մատչելիության ապահովման համար հանրակրթական դպրոցների բազայի հիման վրա նախակրթարանների ցանցի և աշխարհագրության ընդլայնում.

2) Դպրոցահասակ երեխայի կրթության իրավունքի իրացումը ապահովելու նպատակով երեխայի կրթության կարիքի գնահատման գործընթացի կատարելագործում՝ մասնավորապես կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների վաղ հայտնաբերման, հաշվառման, ինչպես նաև համապատասխան շենքային պայմանների /հատկապես՝ թեքահարթակների/ գույքագրման, հարմարեցման, ներառական կրթական ծրագրով աշխատելու համար հատուկ և համապատասխան մանկավարժների հաշվառման ու ապահովման միջոցով:

2. Մրցունակ և ստեղծագործ մարդկային ռեսուրս ունենալու համար կրթության որակի և արդյունավետության բարձրացման ապահովման նպատակով իրագործելու ենք

1) Մարզային, ինչպես նաև համայնքային ենթակայության կրթական, մշակութային և մարզական կազմակերպությունների վարչական աշխատողների ու կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի անդամների ղեկավարման կարողությունների և հմտությունների զարգացման ապահովում՝ մեր կողմից անվճար անցկացվող վերապատրաստումների միջոցով:

2) Համապատասխան կազմակերպություններում աշխատանքային պայմանների վիճակի և աշխատանքների կազմակերպման ու առարկայական ծրագրերի, դասավանդման դրվածքի նպատակային ուսումնասիրման գործընթացի ակտիվացում՝ առաջավոր փորձի տարածման և լավագույններին խրախուսման միջոցով:

3) Հանրության առջև մարզային, ինչպես նաև համայնքային ենթակայության կրթական, մշակութային և մարզական կազմակերպությունների ու դրանց գործադիր մարմինների հաշվետվողականության ապահովում, ինչպես իրենց կայքէջերով, այնպես էլ լիազորված կամ հիմնադիր մարմինների կայքէջերով ու զանգվածային լրատվամիջոցներով:

4) Պետական միջոցների արդյունավետ օգտագործման և խնայողության ապահովման արդյունքում համապատասխան կազմակերպությունների շենքային պայմանների բարելավման, ուսումնականության բազայի և ժամանակակից տեխնիկական միջոցներով համայնքային գործընթացի ակտիվացում:

3. Հոգևոր և ազգային ավանդությունների վրա խարսխված մշակութային միջավայրի ձևավորմանը, պատմամշակութային ժառանգության պահպանմանը, անհատի ստեղծագործական և ֆիզիկական կարողությունների խթանմանը, ազգային ինքնության և քաղաքացիական ու հայրենասիրական բարձր գիտակցությամբ օժտված հասարակության ձևավորմանը աջակցելու նպատակով իրագործելու ենք

1) Կրթական, մշակութային և մարզական կազմակերպություններում երեխաների նախասիրությունների և հակումների հաշվառմամբ համապատասխան խմբակների ու դրանցում ընդգրկվող երեխաների թվի ավելացում:

2) Երեխաների շրջանում հայրենիքին նվիրվածության, հասարակության մեջ հանդուրժողականության սերմանման ու մարդասիրության գաղափարի բարձրացման, իրավախախտ երեխաների թվի կրճատման ապահովման նպատակով ռազմահայրենասիրական և դաստիարակչական բազմաբնույթ միջոցառումների կազմակերպման ակտիվացում:

3) Մշակույթի, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայականացման, առողջ ապրելակերպի տարածման ու հանրահռչակման, պատմամշակութային ժառանգության պահպանման, երիտասարդների քաղաքական, տնտեսական և մշակութային ու սպորտային կյանքին մասնակցության աստիճանը բարձրացնելու նպատակով միջհամայնքային և միջմարզային մարզամշակութային տարաբնույթ միջոցառումների կազմակերպման ակտիվացում և այդ միջոցառումներին հանրության լիիրավ մասնակցության ապահովում:

Մեր շեշտվողական
աշխատանքով՝
անաբնական առաջնություն

